

ՔՐԵՄԼԻՆԻ ՄԷՋ ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ԱՍՍԻ ԵՒ ՓՈԽԹԻՆԻ ՄԻՋԵՒ ԴԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ



Չորեքշաբթի, 15 Մարտ 2023-ին, Քրեմլինի մէջ Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատի եւ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի միջեւ պաշտօնական հանդիպում մը տեղի ունեցաւ:

Հանդիպման սկիզբը նախագահ Փութին ըսաւ. «Ռուսիա եւ մեր հրաւերին ընդառաջելով Մոսկուա ձեր այցելութեան համար: Սուրիոյ ժողովուրդ»

Շար. Էջ 2 >

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍ. «ԹՐԲԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՄ ՍՈՒՐԻԱԿԱՆ ՏԱՐԱԾԵՆԵՐԸ ԴՈՒՄ ԳԱԸ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԵՒ»

Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ «Ռուսիա Այսօր» պատկերասփիւռային կայանին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին շեշտեց Մոսկուա տուած իր այցելութեան կարելորութիւնը Դամասկոսի համար, դիտել տալով որ Ռուսիա եւ Սուրիա նոր պատկերացումներ ունին համաշխարհային շարունակուող եւ ազդեցիկ փոփոխութիւններուն շուրջ:



Արաբական գագաթնաժողովի յառաջիկայ նիստին Սուրիոյ մասնակցութեան շուրջ ուղղուած հարցումին պատասխանելով նախագահը ըսաւ. «Մենք ոչ մէկ արաբական երկրի հետ մեր յարաբերութիւնը խզած ենք: Արաբական երկիրներ իրենք իրենք»

Շար. Էջ 2 >

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՌԱՋԻՆ ՏԻԿՆՈՅ ՀԵՏ ՄԻԱՅԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵԿՆԵՅՈՒ




Կիրակի, 19 Մարտ 2023-ին Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ Առաջին Տիկնոջ՝ Ասմա ալ-Ասատի ընկերակցութեամբ, պաշտօնական այցելութեամբ Արաբական Միացեալ Էմիրութիւններ ժամանեց:

Ապու Տապիի օդակայանին մէջ նախագահը պաշտօնական աւանդական ընկերակցութեամբ:

Շար. Էջ 2 >

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍ. «ԳԵՆԵ ՍՈՒՆԱՐ ՍՈՒՐԻՈՅ ԴԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿԵՅՈՒՄԾԸ»

Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ, Կիրակի, 17 Մարտին Միացեալ Էմիրութիւններու նախագահին հետ հանդիպման ընթացքին շնորհակալութիւն յայտնեց Էմիրութիւններուն Սուրիոյ դէմ մղուած պատերազմի տարիներուն իր առողջ ու եղբայրական մօտեցումներուն համար, որոնք շարունակուեցան նաեւ Սուրիան ցնցած երկրաշարժին աղէտէն ետք: Նախագահը դիտել տուաւ, որ Էմիրութիւններու օդանաւերով ոչ միայն օժանդակութիւն կը հասներ, այլեւ ջերմութիւն ու զօրակցութիւն կը փոխանցուէր Սուրիոյ աղէտահար ժողովուրդին:



Նախագահը անելցնելով ըսաւ. «Երկու երկիրներու յարաբերութիւններուն մէջ անկլինադարձային հանգրուան մը կը կազմէ այս այցելութիւնը, որուն մանրամասնութիւնները կ'արտացոլեն իմ եւ շէյխ Մուհամետ պըն Չայէտի բարեկամութիւնն ու եղբայրութիւնը, որոնք, Աստուծոյ կամքով, դրականօրէն պիտի անդրադառնան Էմիրութիւններու եւ Սուրիոյ եղբայր ժողովուրդներուն վրայ»:

ՄԻԱՅԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԵՅՆՈՒՄ ԶԱԹԻՄԱ ԴԸՆԴ ՍՈՒՊԱՐԱՔ ԸՆԴՈՒՆԵՅՑ ՍՈՒՐԻՈՅ ԱՌԱՋԻՆ ՏԻԿՆԸ

Միացեալ Էմիրութիւններու շէյխուհի Ֆաթիմա պընդ Մուպարաքը Կիրակի, 19 Մարտին ընդունեց Սուրիոյ Առաջին Տիկնի Ասմա ալ-Ասատը եւ անոր ընկերակցող պատուիրակուիւնը Ապու Տապիի պալատէն ներս:



Հանդիպման ընթացքին անոնք խորհրդակցեցան մարդասիրական եւ ընկերային մարգերու մէջ գործակցութեան եւ երկու բարեկամ երկիրներու ոչ-կառավարական նախաձեռնութիւններու փոխանակման մասին, յատկապէս Սուրիոյ երկրաշարժէն վերջ:

Սուրիոյ Առաջին Տիկնը շնորհակալութիւն յայտնեց Միացեալ Էմիրութիւններու պետութեան եւ ժողովուրդին, որոնք Սուրիոյ երկրաշարժէն վերջ անմիջապէս օգնութեան ձեռք երկարեցին, իսկ շէյխուհի Ֆաթիման հրաւիրեց Էմիրութիւններու մէջ բուժելու երկրաշարժի կարգ մը վիրաւորները: Ասմա ալ-Ասատ շեշտեց, որ Միացեալ Էմիրութիւններ բուժուողներուն կեանքի երկրորդ առիթ մը ընծայուեցաւ՝ նախ երկրաշարժէն փրկուելով, ապա նաեւ Էմիրութիւններու մէջ բուժուելու կարելիութիւն ունենալով:

Շէյխուհին իր կարգին շեշտեց երկու երկիրներու սերտ յարաբերութիւնները եւ իր երկրին պատրաստակամութիւնը յայտնեց մարդասիրական տարբեր օժանդակութիւններով մեղմացնելու Սուրիոյ ժողովուրդին տագնապն ու ցաւը:

Յիշենք, որ մայրաքաղաք Ապու Տապիի նախագահական օդակայանին մէջ Սուրիոյ Առաջին Տիկնոջ դիմաւորելու ժամանած էր պետական նախարարուհի դոկտ. Մայսաա ալ-Շամսին:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՅԱՆ ՀԱՅՐԸ ՀԻՐԸՆԿԱԼԵՑ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Երկուշաբթի, 20 Մարտ 2023-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազարեան Ազգ. Առաջնորդարանի իր գրասենեակէն ներս ընդունեց զօրակցական այցելութիւնը Իրաքի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Օշական Վրդ. Կիւլկիլեանի, որուն կ'ընկերակցէր Իրաքի Ազգ. Վարչութեան ատենապետ տիար Խաժակ Վարդանեան: Հանդիպումին ներկայ գտնուեցան նաեւ Ազգ. Վարչութեան անդամ տիար Մանուկ:



Շար. Էջ 7 >

ԱՐՅԱՆԻ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ 100-ՐԴ ՕՐՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ՀՅՂ ՍՈՒՐԻՈՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՒ ԴԱՏԱՆԵԿԱՆ ՄՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶՕՐԱԿՅԱԿԱՆ ՏԵՍԵՐԻՉ

ՀՀԴ Սուրիոյ երիտասարդական եւ Դատանեկան Միութիւններու երիտասարդներն ու պատանիները համախմբուելով Ազգ. Զարէն Եփփե Ճեմարանի շրջափակը Արցախի շրջափակման 100-րդ օրուան առիթով արցախցիներու զօրակցութեան կոչով տեսերիզ մը պատրաստեցին:



Չոյզ միութիւններու ներկայացուցիչները խօսք առնելով ըսին. «Հարիւր օր շրջափակում, տարիներով իրաւագրկում, դարերով անարդարութիւն: Արցախը, ինչպէս եւ մեր ինքնութիւնը սրբութեան համազօր է: Ազատատենջ Արցախի ազատատենջ ժողովուրդը ազատ, ապահով եւ խաղաղ կեանք ապրելու իրաւունք ունի: Հայը տղը է Արցախ հայրենիքին՝ ի գին ամենաթանկագինին: Սիրելի՛ արցախցիներ, ձեր կողքին ենք խօսքով ու գործով»:

Խմբագրական

ԱՐՑԱԽԻ ՇՐՋԱՓՎԱԿՈՒՄՆ ՈՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արցախի շրջափակումը թեև ակոխվել է 100-րդ օրը: 100 օրում մեջ Ատրպեյճան ոչ մեկ դրական քայլի դիմաց...

Ալիև, ի սկզբանե, ամեն ճիգ ի գործ կը դնէ Արցախի կարգավիճակի լուծման մեջ...

Արցախի մերժումը այս հրաւերին Ալիևի քաղաքական ծուղակին մեջ է չիլնալու յստակ պատասխան է: Եթէ հայկական կողմը տարիներ շարունակ կարելու համարած է...

Հակառակ Արցախի հարցը Հայաստանն ու հայկականութենն անջատելու իր փորձերուն, Ալիևի երկրորդ ճնշումը կը բանեցուցի Հայաստանի վրայ...

Փաստօրէն Ատրպեյճան կ'ուզէ աշխարհաքաղաքական գարգացումներու այս առիթէն, Ռուսիա-Ռեքրանիա պատերազմէն, Իսրայէլ-Իրան լարուածութենէն...

Հայկական կողմը եւս ունի հակափաստարկներ, որոնց ճիշդ պահուն եւ ճիշդ ուղղութեամբ օգտագործումը կրնայ սանձել Ատրպեյճանի սպառնական ոճն ու լեզուն:

Ատրպեյճան կը խախտէ ԵԱՀԿ Մինսքի համանախագահներուն միջնորդութեամբ իր իսկ ստորագրած համաձայնագիրները վերջին երեք տասնամեակներու ընթացքին...

Եթէ Հայաստանն տեղահանուած ազերիներու մասին մատնանշում պիտի ըլլայ Ատրպեյճանի կողմէ, տրամաբանօրէն լուսարձակի տակ պիտի բերուի նաեւ Նախիջեւանի Ինքնավար մարզէն, Պաքուէն, Սումկայիթէն...

Այս բոլորը իրենց հանգիստ հունը կրնան գտնել աշխարհաքաղաքական ներկայ լարուածութեան աստիճանական մեղմացումով: Այդ իսկ պատճառով Ատրպեյճան, օգտուելով Թուրքիոյ եւ Իսրայէլի թիկունքէն...

Հայկական կողմը առաւելագոյնս հարցը քաղաքական ուղիներ առաջնորդելու, միջազգային ազդեցիկ կողմերու, դաշնակիցներու հարաւային Կովկասի մէջ...

«Գ.»

ՔՐԵՄԼԻՆԻ ՄԵՋ...

Սկիզբ՝ էջ 1

ընդ աղետալի երկրաշարժի ենթարկուեցաւ, որուն հետեւանքով անոր ցաւն ու տառապանքը կրկնապատկուեցան, իսկ մենք, որպէս հաւատարիմ բարեկամներ ջանք չենք խնայեր անոր ցաւը մեղմացնելու համար»:

Նախագահ Փութին յայտնեց, որ Ռուսիոյ եւ Սուրիոյ յարաբերութիւնները մշտական գարգացման մէջ են, նոյնիսկ առեւտրական փոխանակումը աճ արձանագրած է:

Իր կարգին Նախագահ Ասատըսաւ. «Ռուսիա եւ այս հանդիպումին համար: Զաղաքական մեր հանդիպումները պետք է շարունակուին՝ համարելու միջազգային շարունակուող փոփոխութիւններու լոյսին տակ մեր պատկերացումները»:

Ապա Նախագահը շնորհակալութիւն յայտնեց Սուրիան ցնցած երկրաշարժէն տուժածներուն Ռուսիոյ, յատկապէս Պաշտպանութեան Նախարարութեան եւ ռուսական բանակին օժանդակութեան համար, յայտնելով, որ Սուրիոյ ժողովուրդը երախտապարտ է Սուրիոյ գերիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան պահպանման գծով Ռուսիոյ կեցուածներուն համար:

Նախագահը անցնուց. «Ռուս-սուրիական միացեալ յանձնախումբի աշխատանքի արդիւնքը գոհացուցիչ է: Այս այցելութիւնը Ռուսիոյ եւ Սուրիոյ յարաբերութեան նոր փուլի մը սկիզբը պիտի ըլլայ»:

Նախագահը յայտնեց, որ Մոսկուա իր այս այցելութիւնը առաջինն է՝ Ռեքրանիոյ պատերազմէն ետք, շեշտելով Սուրիոյ գորակցութիւնը Ռուսիոյ:

Նախագահ Ասատ կարելու համարեց աշխարհի հաւասարակշռութեան վերականգնումը, դիտել տալով որ այլապէս աշխարհը տապալման պիտի ուղղուի:

Նշենք, որ այս հանդիպումին առիթով Սուրիոյ Նախագահը ռուսական RT պատկերասփիւռի կայանին տուած հարցազրոյցին ընթացքին շեշտեց, որ այս այցելութեան ընթացքին լայն տեղ ունեցան Սուրիա-Ռուսիա տնտեսական գործակցութեան ծրագիրները եւ համաձայնութիւն գոյացաւ քանի մը տասնեակ ներդրումային ծրագիրներու շուրջ:

ՆԱԽԱԳԱՀ ԱՍՍՏ...

Սկիզբ՝ էջ 1

կապը խզեցին Սուրիոյ հետ, ինչ որ քաղաքական առումով ճիշդ քայլ էր»:

Նախագահը անցնուց. «Արաբական Լիկային Սուրիոյ անդամակցութիւնը կասեցուած է, հետեւաբար Արաբական գագաթնաժողովին Սուրիոյ ներկայութեան համար հարկ է չեղեալ համարել կասեցման այդ որոշումը»:

Այս առիթով Նախագահ Ասատ շեշտեց, որ Սուրիոյ Արաբական Լիկայի վերադարձը նպատակ չէ: Նպատակը՝ արաբական միացեալ աշխատանքն է ու նոյնքան կարե-

ւոր է արաբական երկիրներու երկկողմ յարաբերութիւններու գարգացումը:

Թուրքիոյ հետ յարաբերութիւններու կարգաւորման անդրադառնալով, Նախագահը յայտնեց, որ հարցը թուրք քաղաքական գործիչներուն հետ է, ոչ թէ ժողովուրդին: Ան շեշտեց. «Սուրիոյ համար առաջնահերթութիւնը օտար ապօրինի ուժերուն սուրիական հողերէն դուրս գալն ու ահաբեկչութեան հովանաւորութիւնը դադարեցնելն է: Սուրիական հողերէն թրջական ուժերուն քաշուիլը ազգային հարց է մեզի համար: Եթէ այս օրերուն Էրտողանի համար առաջնահերթութիւնը Նախագահական ընտրութիւններն են, ոչ այլ բան, Սուրիոյ համար առաջնահերթութիւնը օտար ուժերուն քաշուիլը եւ բռնագրաւուած տարածքներուն Սուրիոյ վերահսկողութեան անցնիլն է: Եթէ սուրիական պայմանները ընդունուին՝ այն ատեն է, որ հանդիպում տեղի կ'ունենայ»:

Նախագահ Ասատ դիտել տուաւ, որ Իրան-Սեւուտական Արաբիա համաձայնութիւնը դրական անակնկալ էր, որ իր կարգին արդիւնաւետ ազդեցութիւն պիտի ունենայ ողջ տարածաշրջանին եւ Սուրիոյ վրայ:

Նախագահը անցնելով ըսաւ, «Սեւուտական Արաբիոյ մօտեցումը սուրիական հարցերուն տարիներէ ի վեր բարեփոխուած է: Ան ոչ Սուրիոյ ներքին հարցերուն կը միջամտէ, ոչ ալ զինեալ ահաբեկչական խմբաւորումներ կը հովանաւորէ»:

Եզրափակելով Նախագահը անդրադարձաւ Սուրիոյ վերականգնումին, յայտնելով, որ վերականգնումի անհրաժեշտ գումարը կը հասնի 400 միլիարդ ԱՄՆ տոլարի կամ անելի մեծ գումարի, որովհետեւ կան շրջաններ, որոնք Սուրիոյ պետութեան հսկողութենէն դուրս են: Իսկ աղետալի երկրաշարժին հետեւանքներուն յաղթահարումը կը կարօտի անելի քան 50 միլիարդ ԱՄՆ տոլարի:

ՍՈՒՐԻՈՅ ՆԱԽԱԳԱՀ...

Սկիզբ՝ էջ 1

դուներութեան արժանացաւ Միացեալ Եմիրութիւններու Նախագահ շեյխ Մուհամետ պըն Չայէտ Ալնահիանի եւ հանրապետական պահակազուկին կողմէ:

Եմիրութիւններու օդային տարածք մուտքին, Նախագահին օդանաւին ընկերակցեցան Եմիրութիւններու զինուորական օդանաւեր, որպէս բարի գալուստի արտայայտութիւն:

Նախագահը այնուհետեւ ուղղուեցաւ ազգային պալատ՝ հանդիպում ունենալու շեյխ պըն Չայէտ Ալնահիանի հետ, իսկ Առաջին Տիկինը հանդիպում պիտի ունենայ Միացեալ Եմիրութիւններու շեյխուհի՝ Ֆաթիմա պըն Սուպարաքի հետ:

Նախագահին կ'ընկերակցէր նաեւ Նախարարական պատուիրակութիւն մը եւ Եմիրութիւններու մէջ Սուրիոյ դեսպանը:

Լուրեր Հայաշխարհին

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԱՐՅԱՆԻ ԵՐԿՐԱԿՈՒՄԸ ԴԵՄ Է ՄԱՐԴԱԿԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՕՐԵՆՔԻՆ»

Այսօր հարիւրերորդ օրն է Ատրպեյճանի կողմէ կատարուած Արցախի շրջափակումին: Չենք կրնար լուռ մնալ միջազգային համայնքին եւ մեր մօտ թէ հեռու բարեկամներու անտարբերութեան դիմաց: Փաստօրէն ցեղասպանութեան համազօր անմարդկային արարք մըն է ազերիներու կողմէ 180.000 բնակչութիւն հաշուող Արցախի դէմ կատարուած շրջափակումը: Չի՛ բաւեր միայն դատապարտել ու քննադատել: Անհրաժեշտ է գործնական քայլերու դիմել ու պաշտպանել Արցախի ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը:



Այս մօտեցումով, Մենք, որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Արցախի արդար դատը շարունակեցինք պաշտպանել՝ մէկ կողմէն յիշեցնելով Արցախի ժողովուրդին արդար

իրաւունքը, միւս կողմէն կոչ ուղղելով մեզի բարեկամ երկիրներուն՝ գործնապէս զօրակցելու մեր ժողովուրդի արդար դատին:

Այս մօտեցումով մի քանի օրեր առաջ Յունաստանի վարչապետին հետ ունեցած Մեր հանդիպման ընթացքին յիշեալ հարցը պարզ եցինք: Նոյն մօտեցումով, այս առաւօտ, Արցախի ներկայ վիճակը ու նաեւ ինքնորոշման իրաւունքը ներկայացուցինք Կիպրոսի Նորընտիր Նախագահին: Մեր եկեղեցու ու ժողովուրդին հին բարեկամները նկատուող Յունաստանի ու Կիպրոսի վերին ղեկավարները խոստացան Արցախի հարցը ներկայացնել յառաջիկայ օրերուն Եւրոպական Միութեան Խորհուրդի նիստին:

Արցախի հարցը համահայկական առաջնահերթութիւն է: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը նոյն յանձնառութեամբ պիտի շարունակէ մնալ Արցախի ժողովուրդի կողքին՝ միջազգային շրջանակներէն ներս հետապնդելով Արցախի ժողովուրդին արդար դատը:

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՅԱՐՉԱԿՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԻՆ ՄԱՍԻՆ ՄՇԵՐ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԿ-Ի ՄԷՋ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ Է ՈՐՊԵՍ ՓԱՍՏԱԹՈՒՐԸ

Ատրպեյճանի շարունակական յարձակումը եւ Հայաստանի ու հայ ժողովուրդին դէմ տարածքային նկրտումներու ու բռնութեան հրահրման քաղաքականութիւնը կ'ապակայունացնեն իրադրութիւնը տարածաշրջանին մէջ: ՄԱԿ-ին նման բովանդակութեամբ նամակ յղած է ՄԱԿ-ի ՀՀ մշտական ներկայացուցիչ Միքէլ Մարգարեան: «Արմենփրես»-ի փոխանցումին համաձայն, նամակը 21 Մարտին հրատարակուած է՝ որպէս ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդի Գլխաւոր միութեան պաշտօնական փաստաթուղթ:



«Ատրպեյճանի թշնամական վարքը եւ զաւթողական ծաւալապաշտական հռետորաբանութիւնը անգամ մը եւս ցոյց կու տան անոր մտադրութիւնը՝ շարունակելու յարձակողական իր ուղին եւ օգտագործելու տարածքային նկրտումները՝ որպէս Նոր գիտութեան գործողութիւններու պատրուակ», նշուած է նամակին մէջ:

Միքէլ Մարգարեան նաեւ շեշտած է, որ Նախկին յանցագործութիւններուն համար անպատժելիութիւնը պարարտ հող Նախապատրաստած է հայատեացիութիւնը Ատրպեյճանի մէջ պետական մակարդակով խրախուսելու համար:

ՄԱԿ-ի ՀՀ մշտական ներկայացուցիչը նաեւ կ'անդրադառնայ Ատրպեյճանի տիրապետութեան տակ անցած հայկական պատմական, մշակութային եւ կրօնական ժառանգութեան ոչնչացումին՝ Նախիջեւանի, Լեռնային Ղարաբաղի գրաւուած տարածքներուն մէջ: Վկայակոչուած է հայկական եկեղեցիներու եւ Հին Ջուղայի աւելի քան 5000 խաչքարերու բարբարոսական ոչնչացումը:

Եզրափակելով՝ ան դիտել տուած է, որ Ատրպեյճանի նման վարքը աւելի կ'ապակայունացնէ իրադրութիւնը տարածաշրջանին մէջ եւ վնասարար ազդեցութիւն կը թողու խաղաղութեան եւ անվտանգութեան կայուն հիմքերու ստեղծման վրայ:

ԵՐԿՐԱԿՈՒՄԸ 100-ՐԴ ՕՐԸ ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ ՀՅՂ ԱՐՅԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՆՈՒԹԵԱՄԲ ՅՈՅՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԵՅԱԼ



Ստեփանակերտ



Ֆրանսա



Երեւան



Սթոքհոլմ



Պէյրուզ

«Ապառաժ» կը հաղորդէ, որ Արցախը շրջափակման մէջ է 100 օրէ ի վեր: Թշնամի Ատրպեյճան արդէն 100 օրէ ի վեր չի կրնար հասնիլ իր դաւադիր նպատակներուն՝ հայաթափել Արցախը եւ գրաւել զայն: 2020 թուականի դաժան պատերազմէն ետք թէւ վիրաւոր, սակայն Արցախի սիրտը կը բաբախէ, իսկ ատիկա կը նշանակէ, որ արցախցիին կը պայքարի:

Սնունդի, դեղորայքի, վառելանիւթի, ելեկտրականութեան ու կազի բացակայութեան պայմաններուն մէջ կ'ապրի արցախցիին: 3 պատերազմի բովով անցած, բազմաթիւ զրկանքներ ու դաժանութիւններ տեսած արցախցիի կամքն անկտրում է: Արցախցիին հաւատարիմ է իր ընտրած պայքարի ուղիին:

Երեքշաբթի, 21 Մարտին, Ատրպեյճանի կողմէ Արցախի շրջափակման ցեղասպանական քաղաքականութեան 100-րդ օրը Արցախի երիտասարդները անգամ մը եւս ցոյց տուին իրենց հաստատակամութիւնը՝ այդ հողին մէջ ապրելու ու արարելու՝ ի հեճուկս համայն աշխարհի եւ բոլոր դժուարութիւններուն:

ՀՀ-ի Արցախի երիտասարդական Միութիւնը Ստեփանակերտի Վերածնունդի հրատարակին մէջ կազմակերպած էր ցոյց՝ վերահաստատելու այդ կամքը, արցախցիի ծայրը լսելի դարձնելու համայն աշխարհին, պայքարի վճռականութիւնը արտայայտելու եւ հայ ժողովուրդի միասնական կամքը ապացուցելու համար:

Նոյն օրերուն, աշխարհի բազմաթիւ երկիրներու մէջ, ուր կան դաշնակցական կառոյցներ եւ երիտասարդական, ուսանողական եւ պատանեկան միութիւններ, նմանատիպ ցոյցեր տեղի ունեցան՝ փաստելով, որ դաշնակցական երիտասարդները դիւսազիտական մակարդակով, հանրային բեմերու վրայ չեն մոռցած Արցախը եւ ամէն առիթով միջազգային հարթակներու մէջ կը ներկայացնեն Հայ Դատն ու հայկական պահանջատիրութիւնը:

21 Մարտը խորհրդանշական օր էր, պայքարի 100-րդ օրը: Արցախ կը դիմակայէ եւ իր դիմակայութեամբ թշնամիին «ոչ» կ'ըսէ՝ պարտադրելով յարգանք եւ ակնածանք:

ՍՕ ԽԱՉԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՆ ՀԵՏՔԵՐՈՎ...

-Երկուշաբթի, 13 Մարտ 2023-ին, ՍՕ Խաչի Շրջ. Վարչությունը Ազգ. Պատասխարանի կառույցին ներս հիրընկալեց Հայաստանի Հանրապետության Հալեպի Գլխավոր Հիւպատոս Բարգէն Պատալեանը, որուն ձեռամբ



միութեան փոխանցուեցաւ Հայաստանի Համահայկական Հիմնադրամի Ազգ. Պատասխարանին յատկացուեցած նիւթական օժանդակութիւնը:

Հանդիպման ներկայ էին նաեւ Պատկան Մարմինի ներկայացուցիչն ու Պատասխարանի Յանձնախումբի անդամները:

-Շաբաթ, 11 Մարտ 2023-ի առաւօտուն, ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը, ինչպէս նաեւ երկրաշարժի կեդր. յանձնախումբը այցելեցին Սուրիական Կարմիր Մահիկի մանուկներու յատուկ հիւանդանոցը եւ փոքրերու յատուկ խաղալիքներով ու տաքուկ ծածկոյթներով ուրախացուցին դեռատի հոգի-



ներն ու անոնց ծնողները:

Հիւանդանոցի տնօրէնութիւնը բարձր գնահատեց միութեան մարդասիրական այս ծրագիրը: Շրջ. Վարչութեան ատենապետուհին հակիրճ կերպով ներկայացուց երկրաշարժի աղէտէն ետք ծաւալուած մարդասիրական ու բարեսիրական այլ ծրագիրները:

Շրջ. Վարչութեան այցելութիւնը նախաքայլը համարուեցաւ Կարմիր Մահիկի հետ սերտ համագործակցութեան հեռանկարին:

-ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը սուրիական Կարմիր Մահիկ Կազմակերպութեան տնօրէնութենէն



ստանձնեց մեծաքանակ դեղորայք, փոքրերու կաթ ու սննդէլէն, որոնք առաքուած էին Հայաստանի Հանրապետութեան կողմէ որպէս Սուրիոյ ժողովուրդին մարդասիրական օժանդակութիւն:

Իր կարգին, Շրջ. Վարչութիւնը դեղորայքն ու կաթը յանձնեց ՍՕ Խաչի դարմանատան տնօրէնութեան, որպէսզի տրամադրուի դիմորդներուն, իսկ սննդէլէնը տրամադրեց՝ ժողովուրդին եւ Ազգ. Պատասխարանին:

մարդուի դիմորդներուն, իսկ սննդէլէնը տրամադրեց՝ ժողովուրդին եւ Ազգ. Պատասխարանին:

-Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Ս. Եպս. Ազգարեանի, ՍՕ Խաչի Շրջ. Վարչութիւնը 7 Մարտ 2023-ի առաւօտեան այցելեց Պետական Համալսարանի հիւանդանոցի մանկական բա-



ժանմունքի քաղցկեղով տառապող փոքրիկներուն, անոնց փոխանցելով խաղալիքի ծրարներ ինչպէս նաեւ իր աշխատանոցէն ներս պատրաստուած տաքուկ ծածկոյթներ:

ՀԻՆՉԵՐՈՐԴ ԾԱՐԱՍԻՆԸ ԵՒ ԱՍԲՈՂՁԱՏԻՐԱԿԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ

Տիգրան Ծինպաշեան

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի մամուլի ասուլիսները հարուստ են անակնկալներով: Իր իբրեւ վարչապետ պաշտօնավարութեան սկիզբին, ան առանձին գրառումներով կը հաղորդակցէր հանրութեան հետ: Հետագային փոքր բարելաւում մը տեղի ունեցաւ. լրագրողներու կանխաւ փոխանցած հարցումները կը խմբագրուէին իր կողմէ ընտրուած լրագրողի մը կողմէ եւ կ'արժանանային պատասխանի: Վերջին երկու ասուլիսները տեղի կ'ունենան ուղղակի հարց-պատասխանի ձեւով, սակայն ասուլիսին




մասնակցելու հրաւեր կը ստանան ցանկալի լրատուամիջոցները միայն: Վերջին ասուլիսին կարեւոր նորութիւն էր ընդդիմադիր լրագրողներու մասնակցութիւնը, թէեւ ոչ բոլորին: Պարոն Փաշինեան կարճ յառաջաբան խօսք մը արտասանեց ասուլիսի սկիզբը: Յառաջաբանը առաւելաբար կը վերաբերէր Հայաստանի արձանագրած տնտեսական յաջողութիւններուն, քիչ մըն ալ՝ Արցախի շրջափակման ու Ատրպէյճանի հետ յարաբերութիւններուն: Իմացանք, որ Ատրպէյճան պատասխանած է Հայաստանի առաջարկներուն եւ թէ՛ խաղաղութեան բանակցութիւններուն մէջ յառաջընթաց կայ եւ, թէ՛ կան նոր պահանջներ: Ո՛չ յառաջընթացի եւ ո՛չ ալ նոր պահանջներու մասին մանրամասնութիւններ փոխանցուեցան: Լրատուամիջոցները եւ անոնց միջոցով հանրութիւնը չեն գիտեր, թէ ի՞նչ առաջարկուած է Հայաստանի կողմէ եւ ի՞նչ պատասխան տրուած է: Պրն. Փաշինեան անպատշաճ կը նկատէ անոնց բացայայտումը եւ կը պնդէ, որ Ատրպէյճան պետք է հրապարակայնացնէ իր պահանջները, որոնք, ինչպէս կը հասկանաք տրուած կցկտուր բացատրութիւններէն, ծայրայեղական են եւ անընդունելի՝ Հայաստանի համար:

Անորոշութեան պայմաններուն մէջ լրագրողներուն կը մնար հարցումներու ճամբով մանրամասնութիւններ կորզել վարչապետէն: Զննադատական հարցումներու տարափի մը Նիկոլ Փաշինեան պատասխանեց առանց պատասխանած ըլլալու, միշտ պահուելով գաղտնապահութեան ու պատշաճութեան քողին տակ: Սակայն երբ հարց տրուեցաւ, որ եթէ ամէն նախապատրաստութիւն կատարուած է 44-օրեայ պատերազմի նախօրեակին, ինչո՞ւ այսքան ծանր պարտութիւն կրեցիք, Նիկոլ Փաշինեան ի վերջոյ սայթաքեցաւ: Ան, ամէն գնով պարտութեան պատասխանատուութիւնը մերժելու իր մոլուցքին տուրք տալով յայտարարեց, որ պարտուեցանք, քանի որ բանակին մէջ կը գործէր «հինգերորդ շարասիւն» մը: Բանակը փնտվելու փաշինեանական սովորոյթին վարժ էինք, բայց այս մէկը գլեց եւ անցաւ բոլոր սահմանները: Նիկոլ Փաշինեան վարժ է դէպքերուն տալու սեփական մեկնաբանութիւններ. պատասխանատուներուն՝ պաշտօնէն, դատաւոր, խորհրդարանի պատգամաւոր եւ մասամբ նորին, կը մնայ «փաստերով» հաստատել արդէն որոշուածը: Բանակին վերագրել հինգերորդ շարասիւնի մը գոյութիւնը նախատինքն է ոչ միայն բանակի իրամասնատարութեան եւ սպայակազմին, զինուորներուն, կամաւորներուն հասցէին, այլ նաեւ՝ այն հինգ հազար նահատակներուն, որոնք իրենց արեան հեղումով հայրենի հողը ոռոգեցին: Հիմա պատերազմի պատճառները եւ պայմանները քննող խորհրդարանական յանձնաժողովը ի՞նչ պիտի քննէ. Նիկոլ Փաշինեան արդէն քննած է ու վճիռը արձակած: Յանձնաժողովի անդամները կրնան այլեւս երթալ իրենց գործին:

Միանձնեայ իշխանութեան այս նորագոյն դրսեւորումը ի՞նչ անունով պիտի կոչենք. սա ամբողջատիրութիւն չէ՞: Շատոնց, դժբախտաբար, Հայաստանի կառավարման համակարգը ամբողջատիրական դրսեւորումներ ունի: Ո՞ր մնաց ժողովրդավարութիւնը:

Սրբազան հօր կ'ընկերակցէին Ազգ. Վարչութեան անդամները, նաեւ հիւանդանոցէն ներս ծառայող եւ ՍՕ Խաչի Առողջապահական Յանձնախումբի ատենապետ ԲՇԷԿՈՒԻ Թագուհի Թաշճեան:


Պատուիրակութիւնը նախ հանդիպեցաւ հիւանդանոցի տնօրէն տոքթ. Նատիմ Չահլուքի, որ ողջունեց ՍՕ Խաչի մարդասիրական այս ծրագիրը, մինչ սրբազան հայրը, իր կարգին, դրուատեց հիւանդանոցի մատուցած լայնածաւալ ծառայութիւնը, յատկապէս երկրաշարժի աղէտի այս օրերուն:



Ապա սրբազան հայրը, Շրջ. Վարչութեան անդամներուն ընկերակցութեամբ շրջեցաւ հիւանդանոցի սենեակները, օրինեց մանուկները եւ շուտափոյթ ապաքինում մաղթեց անոնց:

Երիտասարդական Ուսյնեակ

ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ
ՏԱՐԲԵՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ



Վեհան Պարսումեան

Մեզ մե շատեր երանի կու տան Սուրիոյ երբեմնի քաղցր ու անուշ օրերուն, կը յիշեն ամառուութեան, խաղաղութեան եւ երջանկութեան տարիները: Սակայն կան մարդիկ, որոնք չեն յիշեր վերոնշեալները, ոչ թէ որովհետեւ յիշողութեան հարց ունին, այլ պարզապէս չեն տեսած այդ փառքի օրերը: Անոնք հազիւ իրենց աչքերը բացած, տեսած են պատերազմ եւ մասամբ նորին, իսկ հիմա այդ պատերազմի սերունդը մեծցած եւ դարձած է հատուն եւ պատասխանատու: Երկրաշարժի յաջորդող օրերուն էր, երբ տեսայ այդ սերունդի ներկայացուցիչները, որոնք իրենց ակումբէն ներս ապաստանեալներուն ընթրիք կը մատակարարէին:

Մուշեղը, Ճորճն ու Յակոբը Ազգային Զարէն Եփփէ Ճեմարանի 12-րդ կարգի աշակերտներ են, նաեւ անդամ են Սուրիոյ Երիտասարդական Միութեան: Յակոբ պատմեց, թէ ինչպէ՛ս երկրաշարժէն անմիջապէս ետք իր ընտանիքը ամառուութեան Երբեմնի Զարէն Եփփէ Ճեմարանի շրջափակ, ուր ուղղուած էր ամբողջ Նոր Գիւղի բնակչութիւնը: Շատ չանցած արդէն հասած են իր ակումբի ընկերները, որոնք հետ միասին քանի մը շաբաթ լծուեցաւ ժողովուրդի ծառայութեան աշխատանքին: Ճորճ



աւելցուց, որ թէեւ իրենք այս տարի պաքստիկայի պետական քննութեան կը պատրաստուին եւ դասերով ծանրաբեռնուած են, բայց ժողովուրդին հասնիլն ու օգնելը իրենց համար պարտականութեան կանչ է, որովհետեւ մանկութենէն ականատես եղած են ծառայատէր միութեանականներու աշխատանքին, հասակ ամառ են այդպիսի դաստիարակութեամբ, իսկ հիմա իրենց համար յանձնառութիւն է ժողովուրդին օգտակար դառնալը: Մուշեղ աւելցնելով ըսաւ, որ անհոգութեան պէս բան մը եղած է. երբ ժողովուրդը անապահով կը զգայ, հայեացքը կ'ուղղէ հայ երիտասարդին, իրենք ալ այդ անհոգութեան անսալով եկած են կամաւորաբար աշխատելու:

Աւարտին Յակոբ աւելցուց. «Այո՛, բաւական ծանրաբեռնուած ենք դասերով, բայց հիմա մենք պետք է ժողովուրդին կողքին մնանք, դասին ժամանակը կրկին կու գայ եւ այդ ժամանակ մեր ամբողջ կեդրոնացումը կ'ըլլայ դասին վրայ եւ հոն ալ մեր պարտականութիւնը լիովին կը կատարենք»:

Որքան ալ ըսեն, որ Նոր սերունդը փոխուած է, որքան ալ զիրենք վատաբանեն, դժուարութեան պահուն ի յայտ կու գայ անոնց իսկական դիմագիծը: Այս երիտասարդները երեկուան այն փոքրիկներն են, որոնք իրենց ծնողքին ձեռքը բռնած կ'անցնէին հայկական թաղամասերը պաշտպանող երիտասարդներուն քովէն, որոնք հայեացքը գամուած կը մնար այդ երիտասարդներուն հաւաքական ծառայութեան վրայ եւ գուցէ կ'երագէին անոնց նմանիլ օր մը: Եւ հաւատացէ՛ք արդէն սկսած են նմանիլ անոնց... Ուսանիլ, գիտնիլ գիտութեամբ, յաջող անհատներ դառնալ իրենց կեանքին մէջ, միեւնոյն ատեն ծառայել մեր ժողովուրդին՝ իրենց կարելիութիւնները ի սպաս դնելով նաեւ անոր: Հաւաքական կեանքն ու ազգային, ընկերային անողջ մթնոլորտը նոյնքան կարեւոր են այս երիտասարդներուն համար, որքան անձնական կեանքն ու յառաջընթացը:

ՓՈՐՁՈՒԹԻՒՆ
ՄԸ ԵՒՍ




Րաշիկ Կորյան

Որքան ճիշդ ըսուած է, թէ կեանքը փորձութիւններով լեցուն է, իսկ իւրաքանչիւր փորձութիւն դաս մը կու տայ մեզի:

Երկրաշարժն ալ նոյնն էր: Սթափեցման ահագանգ մըն էր կարծեք, որ սորվեցուց մեր ունեցածով գոհանալ ու փառք տալ, գնահատել ու պահպանել զայն:

Մարդիկ այնքան նիւթապաշտ դարձած էին, որ շատերու համար կեանքի ամենակարեւոր բանը դրամն էր, ոմանց համար ալ արդէն ու գարոջը, սակայն երբ պատահեցաւ անսպասելիին՝ մեր եւ մեր ընտանիքին փրկութենէն, մեր հոգիները ազատելէն զատ բան չմտածեցինք: Այդ պահուն՝ դրամը կարեւոր էր, ոչ փաստաթուղթերը, ոչ ալ գարոջէնը:



Այս փորձութիւնը մեզի սորվեցուց ոչ մէկ ընկերէ նեղացած մնալ, ամբացուց կապը նոյնիսկ ոխակալ ընկերներու, դրացիներու, ընտանիքներու միջեւ: Թե՛ն գիտէիք, սակայն աւելի համոզուեցանք, որ մեզի հետ ոչ մէկ բան կրնանք տանիլ դէպի յաւիտենական կեանք, միայն մեր բարի համբաւը, անունը կը յիշուի, ուրիշ՝ ոչ մէկ բան...:

Երբեմն կը մտածեի, թէ մարդիկ այնքան նիւթապաշտ եղած են, որ հազիւ ցնցում մը կրնայ դարձի բերել եւ ուղղել զիրենք: Արարի՞չը գայրացաւ, թէ բնութիւնը բարկացաւ...: Այսպիսի ցնցում չէի ակնկալէր: Այլ ցնցում մը, հաւանաբար դաստիարակիչ ցնցում մը, որ արթնցներ մեզ մեր քնացած վիճակէն, որ աւելի մարդկային, մաքրակեցնող կեանք մը ապրէիք:

Կ'երեւի Աստուած աւելի լաւ գիտէ, թէ ո՞ր ձեւն է ճիշդ եւ անոր հիման վրայ փորձութեան ենթարկելով փրկեց մեզ:

Յոյսով եմ, որ յառաջիկայ օրերը աւելի պայծառ եւ սպիտակ ամպերով գարդարուած երկիւք մը կը պարգեւեն Հալէպին, իսկ մենք նոր ու խաղաղ կեանք մը կ'ապրինք:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ
ԷՎԼԻՆ ՂԱԶԷԼԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 26 Մարտ 2023-ին, յաւարտ Ս. Եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցույ մէջ, Վիլլաներ - Հալէպ:
Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին բնակարանը:

ՀՈՂԻՆ ՃԻՉԸ...

Սկիզբ՝ էջ 5

րենակիցներու ցաւած սրտերուն վրոգովմուկը անտեղիօրէն բազմապատկել:

Իբրեւ վկայ մը Հալէպի ցնցումներուն՝ 6 Փետրուար 2023-ին Մարաշի աղետալի երկրաշարժին հետեւանքով, որուն անուղղակի կրողները նաեւ մենք եղանք, բնաւ պիտի չուզէի բացասական արձանագրութիւններ կատարել, իմ եւ բոլոր հալէպաբնակներու զգացումներն ու ցաւը անգամ մը եւս նորոգելու համար:

Սարսափելի էր ... կորսնցուցիք երկու թանկագին հայեր, հազարաւոր սուրիացի անմեղ քաղաքացիներ, տուններ, հաստատութիւններ աւերուեցան...

Աննկարագրելի էր ապրուած զգացումին դաժանութիւնը. ոչ միայն հողը երերաց, այլ իր ամբողջ ուժգնութեամբ դողդաց, պորթկաց, ցատկուտեց մեր երեսն ի վեր...

Քառասուն օրեր անցան այդ ահաւոր օրէն. կ'ըսուի թէ քառասունը շատ մը իրականութիւններու ամբողջացումն ու լրումն է: Նոյնի Տապանէն դուրս գալուն պէս անցնող փորձութենէն դուրս եկանք. բայց սա պահուն, մինչ

կը գրեմ, կրկին փոքրիկ ցնցումներով հողը իր գոյութիւնը զգացնել կուտայ, հաւանաբար 3,8-4 ռիխթով ներկայութիւնը կը փաստէ: Չարոյթը հաւանաբար չէ անցած եւ մեր իւրաքանչիւր շնչառութեան հետ տակաւին իր մասին մտածել կու տայ:

Մեծամասնութիւնս 6 Փետրուարին եւ 20-ին երկու հրաշքներու դերակատարներն ու ականատեսները եղանք: Մեզ մէ շատ հեռու չեն ոչ Մարաշը, ոչ Անտիոքը, ոչ ալ Իտլիպը, որոնք բնակիչները վայրկեանի մը մէջ կորսնցուցին իրենց ամենէն թանկը՝ կեանքը: Աւերակոյտերու, անբնակ տարածքներու վերածուեցան ցնցուած վայրերը. 7,7 եւ 7,8- 5, 6 ռիխթը ուժգնութիւնը բոլորս ալ զգացինք մեր մարմնի բոլոր բջիջներով:

Երկու մեծ ցնցումները ապրողը անկարելի էր, որ նոյնը մնար իբրեւ մարդ, ինչ որ էր նախապէս ... Հոգիները ենթարկուեցան վերափոխման: Յովնանին կետծուկին փորէն դուրս գալուն պէս մենք եւս երկուդաժութեամբ մեր առջեւ դրուած պատասխանատուութեան գիտակից, զգաստացած ճամբար էլանք կրկին, վաղն ամբողջութեամբ նախախնամութեան յանձնելով...

Հիմա մէկ նախադասութիւն կը շրջի իւրաքանչիւրիս ուղեղի ծալքերուն մէջ. մեր ողջ մնալը, ապրիլը հրաշք մըն էր: Արդեօք մեր արարիչը ի՞նչ ըսել կ'ուզէ մեզի, կամ ի՞նչ ըսած էր, որ տակաւին չհասկնալ կը ձեւացնենք:

«ԱՆԱՅԻՍԸ ՄԱՄԱՍ Է»

Նայիրի Աստուրեան-Ֆրանքեան

Մայրս՝ Անայիսը, դուստրերէն մին է բազմազաւակ, բնիկ այնթապցի Արթին եւ Նեկտար Փաթանեաններու: Հայրը պղնձագործութեամբ կը զբաղէր, իսկ մայրը՝ Նեկտար Շեփարտեան, Այնթապի ձեռագործներ աշխատելով թէ ու թիկունք եղած էր ընտանիքին:

Մայրս յաճախ կը յիշէր մեծ մօրս ծննդեան թուականը՝ 1915-ը, ու կը շեշտէր, որ մեծ մայրս երբեք տեսած չէր իր հայրը, որը աշխարհ եկած էր, ինչպէս Եղեռնի սերունդին մեծամասնութիւնը:

Ընտանիքը ջքաւոր էր, այդ իսկ պատճառով, կարելիութիւն չունենալով կրթաթոշակ ապահովելու՝ մերժուած էր կարգ մը դպրոցներէ եւ ընդունուած անտարանական դպրոց մը: Երախտապարտ հոգի մը ունենալուն, մայրս մինչ օրս շնորհակալութեամբ կ'արտայայտուի այդ համայնքին մասին:

Արաբերէն լեզուի մէջ դժուարութիւն գտնելով ստիպուած էր հեռանալ ուսումնական կեանքէն եւ նետուիլ գործի ասպարէզ: Սկիզբը բամբակի եւ կերպասի գործարաններ աշխատելով, հետագային դերձակութեան դասընթացքի հետեւած էր: Տասնհինգ տարեկանին արդէն ծանօթ դերձակուհի էր:



Մօտ 60 տարի օրն ի բուն աշխատելով իր անձնական գործը զարգացուցած էր: Բասնմէկ-ամեայ քրոջս՝ Արմէնուհիին մահէն ետք, մայրս ալ նոյնը չէր, ընկճուած էր եւ հետզհետէ յաճախորդները կը ցրուէր: Սակայն շրջան մը ետք աշխատանքի դիմեց հանրածանօթ դերձակ Կարպիսին մօտ: Հոն սըրտանց եւ հաւատարմաբար կ'աշխատէր, կարծէք իր գործատեղին ըլլար: Երբեք գործէն չէր դժգոհեր, որովհետեւ համոզուած էր, որ առանց յոգնութեան վարձատրութիւն չկար: «Հալալ է» արտայայտութիւնը շատ կը գործածէր: Սօրմէս ստացած բոլոր նուէրներս այլ արժէք ունէին, որովհետեւ աչքերուն լոյսը մաշեցնելով, հմուտ ձեռքերով վաստկած էր, գինը սուղ վճարած էր:

Հիմա իր մեծագոյն հարստութիւնը թռուկները կը սեպէ: Անոնց մասին ամէն խօսելուն պարծանքի զգացումը կը պատէ հոգին: Երբ հարց կու տան իրեն, թէ մեծամամ, ինչ կ'ուզես նուիրենք քեզի, «Երբ գործի սկսիք, ձեր աշխատավարձով ապահոված նուէրը միայն կ'ընդունին», կը պատասխանէ: Ան, իր այս խօսքով, աշխատանքը կ'իմաստաւորէ:

Մօրս ամենաշատ կրկնած խօսքը «Գործը տուրք է» արտայայտութիւնն էր: Չինք կը նմանցնեմ Աստուածաշունչին մէջ յիշուած առաքիլի կնկան, որ «իր տան ծամբաները կը քննէ եւ ծուլութեան հացը չ'ուտեր» (Առակ.31.27):

Ան համոզուած է, որ կեանքիդ մէջ բանի մը տիրանալու համար գին պիտի վճարես: Հոգեւոր իր կեանքին մէջ անգամ այս տրամաբանութիւնը կը տիրէ: Մինչեւ օրս երբ լուրջ խնդրանք մը ունենայ, անվարան ծոմապահութեան կը դիմէ... կարծէք հայր Աստուած առանց այդ քայլին գինը պիտի չշնորհէր իր ցանկացածը: Մեզ ալ ծոմապահութեան մղելով յաճախ կ'ըսէ. «Ծոմապահութիւնը Աստուծոյ դէմ խոնարհիլն է»:

Տնօրինել եւ տնտեսել լաւ գիտէ մայրս: Կարիքի պահուն միշտ մէկ կողմ պահած «ատաղծ» մը երեւան կը հանէ: Իր կարելիութեան սահմանին մէջ, լռութեամբ, բաժին կը հանէ նաեւ կարիքաւորներուն: Մայրս, իրականութեան մէջ, չէր աշխատէր մեծ գումարներ վաստկելու, այլ՝ ինքնաբաւ ըլլալու համար:

Պատանութեանս օրերուն մեծ համակրանք ունէի հայերէնի ուսուցչուհիս՝ Տիկ. Լալա Մինասեանին հանդէպ, որուն դասաւանդութիւնն ու բարեհամբոյր մօտեցումը իւրայատուկ կը համարէի: Հայերէնի պահուն մեր դէմ կանգնած կ'ըլլար ոչ միայն դասատու մը, այլ՝ գիտակից ու հասկացութիւն ցուցաբերող, գթարատ մայր մը: Ինչ մեղքս պահեմ, իրեն պէս մայր ունենալ կը փափաքէի միշտ:

Այդ տարիներէն մինչեւ ամուսնութիւնս մօրս հանգամանքը ինծի համար շուքի տակ մնացած էր: Ամուսնութենէս ետք, երբ հետեւեցայ մանկավարժական դասընթացքներու, դասախօսական շարքերու եւ ընթերցեցի զանազան գիրքեր, ուզեցի կատարելալ մայր մը ըլլալ: Ուժերս լարած էի, սակայն ջանքերս ի գուր էին, որովհետեւ ժամանակի ընթացքին փորձառութեամբ համոզուեցայ, որ կատարելալ մայրեր չկան, կան իրենց ողջ կարելիութիւնները գաւակներուն ի սպաս դնող, գոհաբերող մայրեր:

Ամէն անգամ որ մայր բառը պատկերացնել կ'ուզեի, մօրս սոսկ կըրնակը կը տեսնէի... այո՛ր, կրնակը... ամբողջ կեանք մը կարի մեքենային տեսն էր

ԳՈՎԵՐԳ ՄԱՅՐԵՐՈՒՆ



Խորեն Զինյ. Պերթիզեան

Դուք բառարան գոհողութեան
Դուք մեղեդի Եղեմական
Միջոց կեանքի գոյատեւման
Դուք յարգարժան եւ յիշարժան
Անբաժան մաս մեր էութեան:

Ձեր ձեռքն օրհնեալ գութի թարգման
Դուք քաղցրաձայն, վիշտի դարման
Դուք աղ ու լոյս, մեր գանձարան
Երթով հարուստ, հերոսական
Դարձաք «Մենք»-ին համար պաշտպան:

Ո՛վ հայ մայրեր նուիրական
Ձեր կոչումով վաւերական
Բարեխօս եք աղօթական
Բիր բարութեան հանդիսարան
Ձեզմով տուններ տաճարցան:

Մայրամուտ է մեր առօրեան
Երբ ձեր աղօթքն է բացական
Ձեր մաղթանքով ջերմ, շահեկան
Լուսապայծառ է մեր ներկան
Եւ պատուաբեր մեր ապագան:

Չուարթ դեմքով յուսադրական
Կը շռայլէք սեր սրբազան
Դուք հրաշքի խօսուն վկան
Երբ տագնապներ, սեւ օրեր կան
Սփոփիչ եք՝ ցաւակցական:

Սիրալիլ եք՝ անանձնական
Առաքիլի, ժիր, ժրաջան
Ծաղկազարդ եք եւ ծիածան:
Դուք տօնելի, միշտ աննման
Ողջոյն ձեզի որդիական:

ան... դեմքը մեզի չէր ուղղեր: Մինչդեռ որքան կարելոր էր դէմ դիմաց գրուցելն ու երկար ժամանակ անցընելը, որոնցմէ գրկուած էի, ինչպէս մեզմէ շատեր եւ ինքզինքիս կը խղճայի յաճախ: Հասուն տարիքիս միայն հասկցայ, որ նոյն այդ կռակը հօրս յենարանը դարձած էր, որպէսզի կանգուն մնայ մեր օճախը: Մայրս հօրս հետ ձեռք-ձեռքի տուած, ճակտի քրտինքով իր ապրուստը վաստկած եւ չորս զաւակ պահած էր: Նիւթակալով ամուսնոյն օժանդակած էր, բայց երբեք զինք չէր թերագնահատած ու հայրս տան գլուխը ըլլալու հանգամանքը պահած էր տեւաբար:

Հիմա կը հասկնամ անոր գոհողութիւններն ու այս համարները կը յարմարցնեմ մօրս կերպարին՝ Առակ. (31. 10-12) «Առաքիլի կինը ո՛վ կրնայ գրտնել: Անոր գինը գոհարներն շատ աւելի է: Անոր երկանը սիրտը անոր վրայ վստահ է ու ամարի կարօտ չ'ըլլար»:

Ամուսնութենէս ետք, մօրենական տունէս գատուած ըլլալով, միշտ ալ գրկաբաց ընդունելութիւն գտած եմ ծնողքէս երբ տուն այցելած եմ: Այդ տունը յոգնութեանս ատեն հանգստավայր է, հիւանդութեանս ատեն՝ բուժարան, նեղութեանս ատեն՝ ապաստանարան:

6 Փետրուարի երկրաշարժէն ի վեր մօրս մօտ կեցութիւնս հաստատած եմք ընտանեօք: Ան վաղ առաւօտէն մինչեւ ուշ գիշեր մեզ կը սպասարկէ եւ յաճախ կը կրկնէ «տունը տուններնիդ է»: Գիշերները կը հսկէ ու անպայման կը ստուգէ, թէ լաւապէս ծածկուա՞ծ եմ: Չէ որ Մայր է... հոգատարութիւնը եւ ինսամատարութիւնը բնագոյնէր դարձած են:

Ու այս բոլորէն ետք, երբ հարց կու տամ մօրս, թէ ինչպէ՞ս կրնամ գինք հատուցանել իր կատարած գոհողութիւններուն համար: Ան մեքենաբար կը պատասխանէ. «Դուն ալ գաւակներուդ նոյն ձեւով պիտի խնամես»:

Մայրս, ինչպէս բոլոր մայրերը, ոչ մէկ ակնկալութիւն ունի. նուիրումն է իր մայրական կոչումը:

Այս բոլորը կը պատմեմ խորհուրդ տալու նոր սերունդին, որ երբեք չբաղդատեն իրենց մայրերը այլ մայրերու հետ: Չթերագնահատեք զանոնք: Անոնք Աստուծոյ կողմէ մեզի համար նշանակուած հրեշտակներ են, կը գուրգուրան եւ միայն ամենաբարին կը ցանկան մեզի:

Ուստի խիղճս հանգստացնելու եւ թերացումս սրբազրելու համար անգամ մըն ալ անցեալ կ'երթամ եւ որպէս պատանի պատուելով մայրս կը կրկնեմ. «Անայիսը մամաս է»: Հպարտ եղէ՛ք ձեր մայրերով:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ
Երկար աշխատանք է յոգևորե-
նէ ետք վերջապէս պիտի պարգե-
ւատրուիք: Երջանիկ պահեր պիտի
ապրիք ձեր սիրելիներուն հետ:



Ցուլ
Սովորականէն աւելի մեծ գումար
կը ծախսէք: Յանկարծակի փոփոխու-
թիւններ կը սպասեն ձեզի՝ այս շա-
բաթ, որոնք դրականօրէն պիտի ազ-
դեն ձեր վրայ: Ձեր առողջութեան ալ
հոգ տարէք:



Երկուորեակ
Դուք զգալիօրէն յաջողութեան
պիտի հասնիք այս շրջանին: Ժամա-
նակն է, որ դուք ձեզ արժեւորէք եւ ձեր
գործերը վերատեսութեան ենթարկէք:



Խեցգետին
Նիւթական դժուարութիւն մը պի-
տի ունենաք: Մօտիկ բարեկամ մը մեծ
աջակցութիւն մը պիտի կատարէ ձե-
զի: Շաբաթը բարի պիտի աւարտի:



Առիւծ
Ձեր բոլոր գործերը յաջող ընթաց-
քի մէջ են եւ դուք մեծ եկամուտներ
պիտի ունենաք: Վերջապէս բոլոր խըն-
դիրները պիտի լուծուին եւ դուք հո-
գեպէս պիտի հանգչիք:



Կոյս
Նոր եկամուտ մը չափազանց պի-
տի ոգեւորէ ձեզ: Ձեր հնարամտութե-
ան շնորհիւ պիտի կարենաք յաղ-
թահարել բոլոր խոչընդոտները:



Կշիռք
Ձեր վաստկած գումարները օգ-
տակար բաներու յատկացուցէք: Չա-
փազանց շռայլ մի՛ ըլլաք, որպէսզի յե-
տոյ չզոյջաք:



Կարիճ
Այս շաբաթ գործի մէջ յաճախորդ-
ներու թիւի աճ պիտի արձանագրէք եւ
հպարտութեամբ յառաջանաք: Ժա-
մանակն է, որ դուք ձեզ պարտադրէք
ձեր խելամիտ գործերով:



Աղեղնաւոր
Ձեր առօրեայ գործերով մի՛ ծան-
րաբեռնուիք: Զիչ մըն ալ հանգիստի
ու մարզանքի ժամանակ տրամադրե-
ցէք: Հաճելի պտոյտ մը կը սպասուի
ձեզի:



Այծեղջիւր
Չափազանց ուրախ ու խանդա-
վամ էք այս շրջանին: Շաբաթավեր-
ջին հաճելի պտոյտ մը պիտի ունենաք,
ուր նոր մարդոց հետ պիտի ծանօթա-
նաք:



Չրիս
Ձեր առօրեայ գործերը մի՛ յետա-
ձգէք: Աւելի գործունեայ եղէք: Նոր հիւ-
րեր պիտի ունենաք, որոնք պիտի քա-
ջալերեն ձեզ գործի նոր առաջարկ մը
ընդունելու:



Ձուկ
Մօտիկ ազգական մը քաջալերա-
կան խօսքերով պիտի խրախուսէ ձեզ:
Մի՛ տրտնջաք: Լաւատես եղէք եւ գոր-
ծի ասպարէզ նետուեցէք: Թերեւս յա-
ջողիք:



ՀԱՅ ՄԱՅՐԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ

Հայոց պատմութեան բոլոր փուլերուն մօր ներկայութիւնը տիրական եղած է: Սկսած հայ դի-
ցաբանութենէն հասնելով մինչեւ հայ եկեղեցի ու հայ ժողովուրդի ազգային, մշակութային կեանք,
մայրը իր պատուոյ տեղը գրաւած է արժանանալով յարգանքին թէ՛ որպէս աստուածուհի, թէ՛ որ-
պէս գրող, թէ՛ որպէս Մայր Աստուածածին, թէ՛ որպէս հայրենի-
քի խորհրդանիշ՝ Մայր Հայաս-
տան եւ թէ՛ որպէս ազատագրա-
կան պայքարի ռահվիրա:



Մեր մատենագիրները՝
Ազաթանգեղոս, Խորենացի,
Եղիշէ եւ ուրիշներ, ինչպէս նա-
եւ մեր եկեղեցւոյ Հայրապետնե-
րը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչէն
սկսեալ մինչեւ Սուրբ Ներսէս
Շնորհալի եւ Նոր ժամանակնե-
րու մեր հոգեւոր հայրերը սքան-
չելի տողերով բնորոշած են հայ
մօր դերը:

Թերեւս ամենէն աւելի ցայ-
տուն ու հարագատ կերպով հայ
մշակոյթն է, որ գրականութեան
ու գոյներու, ծայնի ու կերպի ճամբով ներկայացուցած է հայ մօր կերպարը, անոր իւրայատուկ
տեղն ու դերը մեր ազգի ու հայրենիքի պատմութեան մէջ:

Հայ բանաստեղծները իրենց ամենագեղեցիկ տողերը նուիրած են հայ մօր: Մայրը եղած է ներշնչ-
չանքի աղբիւր շատերուն:

Ստորեւ յիշուած երկու բանաստեղծութիւնները կը ձօնենք սուրիահայ մայրերուն, որոնք Տէր
Չօրի անապատներէն մինչեւ սուրիահայ գաղութի ծաղկուն օրերը հայ սերունդներ դաստիարակե-
ցին, հայ ընտանիքը պայծառ պահեցին ու ազգային կեանքին նուիրեալ կամաւորներ դառնալով
մեր հաւաքական կեանքը հարստացուցին: Իսկ Սուրիոյ պատերազմի, աղետալի երկրաշարժի օրե-
րուն յոյսի սերմնացանը եղան իրենց բարեհամբոյր ներկայութեամբ ու ազգային տարբեր ոլորտնե-
րու մէջ իրենց անխոնջ աշխատանքով:

ԴՈՒՆ ՄԻԱՅԱՐ ՄԵՐ ՀՈՂԻՆ



Մուշեղ Իշխան

Մայր իմ՝ արեւ ու հեռանուշ լուսնկայ,
Դարձար նշխար ու միացար մեր հողին,
Եւ հողն անուշ հայրենիքին հնամեայ,
Քիչ մ'աւելի անուշցաւ...
Մայր իմ՝ երկինք եւ առաւօտ սրբալոյս,
Դուն մեր հողին տուիր հոգիդ խնկաբոյր,
Եւ հողը սուրբ՝ լուսապսակ պապերուս
Քիչ մ'աւելի սրբացաւ...
Մայր իմ, դուն գանձ եւ անսպառ ոսկեհանք,
Դարձար խորհուրդ եւ հողակոյտ աննշան,
Բայց գանձն անխոյզ մեր հողերու լանջքին տակ
Քիչ մ'աւելի աճեցաւ...
Մայր իմ՝ աղբիւր անհաս հրաշքին,
Գացիր ննջել Լուսաւորչի աստղին տակ,
Եւ սիրտն անհուն Հայաստանի մայր հողին
Քիչ մ'աւելի մայրացաւ...
Մայր իմ՝ երդիք, մայր իմ՝ սեղան տոհմական,
Հարագատ բառ եւ սուրբ բարբառ մայրենի,
Քեզմով հիմա աշխարհն հայոց աննման
Քիչ մ'աւելի հայացաւ...

ՄՕՐ ՁԵՌՔԵՐԸ



Պարոյր Սեւակ

Այս ձեռքերը՝ մօր ձեռքերը,
Հինաւուրց ու նոր ձեռքերը...
Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Պսակուելիս ո՛նց են պարել այս ձեռքերը՝
Ի՛նչ նազանքով,
Երազանքով:
Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Լոյսը մինչեւ լոյս չեն մարել այս ձեռքերը,
Առաջնեկն է երբ որ ծնուել,
Նրա արդար կաթով սնուել:
Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...
Չրկանք կրել, հոգս են տարել այս ձեռքերը
Ծով լռութեա՛մբ,
Համբերութեա՛մբ,
Ինչե՛ր ասես, որ չեն արել այս ձեռքերը...



Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԻՆՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Սուրիոյ պասքեթի աղջկանց 16-էն վար տարիքի հաւաքականը, որ ամիս մը առաջ արժանացաւ Արեւմտեան Ասիոյ ախոյեանութեան, Կիրակի օր պարգեւատրուեցաւ Սուրիոյ Մարզական Գերագոյն Դաշնութեան Նախագահ Ֆիրաս Մուալլայի կողմէ: Յիշենք, որ հաւաքականին մաս կը կազմէր ՅՄԸՄ-ի աղջկանց խումբի խաղացող Սուհա Չամսաքեան:

-Սուրիոյ փինկ փունկի կրտսերներու ախոյեան Յալէայի Սքէք խումբի խաղացող Յովիկ Միսաքեան Իրաքի մէջ տեղի ունեցած բարեկամական եւ արեւմտեան Ասիոյ մրցումներուն յաջողեցաւ արձանագրել տպաւորիչ արդիւնք և եր: Յովիկ կը նկատուի մրցաշարքի ամենէն կրտսեր խաղացողը, իր մրցակիցները եղան երեք խաղացողներ:



-Սուրիոյ Ֆութպոլի Դաշնութիւնը Յինգաքթի օր հրաւիրեց Սուրիական մամուլի ներկայացուցիչները հաւաքականի նորանշանակ, արժանիացի մարզիչ Յեքթոր Զոուփերը ներկայացնելու համար, հրաւիրուեցան նաեւ ուսումնամարզական հաւաքին մաս կազմող խաղացողները:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ԵՐՐՈՊԱՅԻ «ՉԵՄՓԻՆՆԵՆԸ ԼԻԿ»-Ի ԶԱՌՈՐԴ ԵԶՐԱՎՈՒԿԻՉԻ ՎԻՃԱԿԱԶԳՈՒՄԸ

Յինգաքթի օր Զուիցերիոյ Նիոն քաղաքին մէջ տեղի ունեցաւ Եւրոպայի «Չեմփինըն Լիկ»-ի քառորդ եզրափակիչի վիճակաձգումը: Եզրափակիչին տեղի պիտի ունենան ուժեղ հանդիպումներ: Նախկին տարուան ախոյեան Ռեալ Մատրիտը մրցակից պիտի ունենայ Անգլիոյ Չելսին, որ դարձեալ անցեալ տարի նոյն փուլ իր մրցակիցն էր: Գերմանիոյ Պայերն Միունխի մրցակիցը պիտի դառնայ Մանչեսթըր Սիթին: Սոյն երկու հանդիպումներու յաղթողները պիտի մրցին յաջորդ փուլին: Իտալիոյ Նափոլիի մրցակիցը պիտի դառնայ Միլանը, Իսկ Ինթըր Միլանը պիտի մրցի Փորթուկալի Պենֆիլդայի հետ: Վերջին փուլին յաղթողները պիտի մրցին յաջորդ փուլի աւարտին:



ՖԻՖԱ-Ի ՆԱԽԱԳԱՅ ԾԻԱՆՆԻ ԻՆՖԱՆՏԻՆՈ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱՒ

Ռուսաստանի մայրաքաղաք Քիլկալիի մէջ տեղի ունեցաւ Ֆութպոլի Միջազգային Դաշնութեան «ՖԻՖԱ»-ի 73-րդ ընդհանուր նիստը, որուն ընթացքին դաշնութեան Նախագահ զուիցերիացի ճիանի Ինֆանտինօ վերընտրուելով մնաց Նախագահի պաշտօնին վրայ: Ընտրութեան 52 տարեկան Ինֆանտինօն եղաւ միակ թեկնածուն: Ան իր պաշտօնին վրայ պիտի մնայ մինչեւ 2027: Աւելցնենք, որ այս երրորդ անգամն է, որ ճիանին կ'ընտրուի դաշնութեան Նախագահ: Ան առաջին անգամ ընտրուեցաւ 2016-ին, իսկ երկրորդ ընտրութիւնը եղաւ 2019-ին:



ԽԱԶԲԱՌ (ՄԽ 431)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1								■				
2						■						
3		■							■			■
4				■							■	
5					■				■			
6				■							■	
7		■					■					
8						■		■			■	
9			■									
10	■					■			■			
11				■							■	
12								■				

Յորիզոնական

- Աւետիք Իսահակեանի երկերէն՝ «..... Աղբիւրից»: Հայոց երկրորդ ամիսը:
- Ակումբ, ժողով: Կոնաքեր ծառի հիւթ, որ կ'օգտագործեն կարասի փայլեցնելու համար:
- Կարմիր պղպեղ: Սարսափ:
- Շաղկապ: Աչք:
- Գիւղաքաղաք: Առաջին կինը:
- Խաղողի կուտ: Տիրան Զրաքեանի ծածկանունը:
- Մարմնի մէջքէն վերի մասը՝ բացառելով թեւերն ու գլուխը: Բայական լծորդութիւն:
- Չուարթ, բարգաւաճ: Տարի:
- Իրերայաջորդ տառեր: Ստամբուլն եկող կազը՝ բերնէն դուրս տալ:
- Հինգած պանիրի մակր որդ: Տառի մը անունը:
- Քաջ: Ընտիր ձի:
- Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ ճարտարապետը: Հակառակ՝ արական կոչական բառ:


Ուղղահայեաց

- Սուրբ Յովհանն արդիւնքներէն (պտուղներէն): Տարի:
- Տարածքի միաւոր: Նշանաւոր որկրամուր:
- Նշան, դրոշմ: Իգական սեռ:
- Հակառակ՝ կտրուած ու մաքրուած ոչխարի բուրդ: Տառի մը անունը:
- Յետոյ: Ասացուածքը կ'ըստ՝ «..... օր հաւերուն ջուր տուող շատ կ'ըլլայ»:
- Հայրապետական այթոռը Էջմիածինէն առաջին անգամ փոխադրուած վայրը: Տառի մը անունը:
- Պանդուկ: Մզլոտիլ, ծիւրիլ:
- 490: Հակառակ՝ 4400: Հակառակ՝ գէշ:
- Ռամկօրէն՝ այր: Հակառակ՝ կնոջ հայրը: Տարածքի միաւոր:
- Չեռնիսա, մասնագետ: Իգական անուն:
- Ճամբայ:
- Փոքրացնող մասնիկ: Հետեւեալ խօսքին հեղինակը. «Իրականութիւն եւ իտեալ. առանց այդ երկուորեակ ըմբռնումներուն՝ ազգ մը միշտ ենթակայ է անկումներու եւ դառն յուսախաբութեանց: Մեկով միշտ կեանքին շփումը կ'ունենանք. միւսով՝ մեր աչքերը հեռանշող աստղին կը յառենք»:

ԽԱԶԲԱՌ (ՄԽ 430)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Ե	Ր	Ձ	Ա	Կ	Ն	Լ	Թ	Ի	Լ	Ն	
2	Ղ	Ա	Յ	Ծ	Մ	Ի	Կ	Լ	Ե			
3	Ե	Ր	Ր	Ա	Ն	Ա	Ե	Ր				
4	Ր	Ղ	Ի	Ն		Վ	Ա	Ր	Կ			
5	Ա	Լ	Ե	Ա	Ք	Ա	Ղ	Ա	Ղ			
6	Մ	Ն	Լ	Ր	Ի	Լ	Ր	Ա	Լ			
7	Ա					Ե	Ն	Ճ				
8	Յ	Ն	Ք	Ե	Լ	Ե	Ա	Ն	Ա	Ղ		
9	Ր	Ե	Ղ	Ա	Կ	Ա	Ն	Ն	Ա			
10		Ձ		Ա	Ն	Ա	Ր	Ք	Ա	Յ		
11	Ա	Լ	Ե	Ր		Լ	Ա	Լ	Ն			
12	Ե	Ր	Ն	Լ	Ա	Ն	Ղ	Օ	Տ	Ե	Ա	Ն

ԼՈՒՐԻՆՍ



ՍՐԲՈՅ ԲԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ԵՒ ՀԱՄԱՆՈՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՅԱԼ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՊԱՏԱՐԱԳՈՎ

Կիրակի, 19 Մարտ 2023-ին, Բերիոյ Յայոց Թեմէն ներս եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագով յիշատակուեցաւ Սեբաստիոյ մէջ քրիստոնէական հաւատքին համար նահատակուած եւ սրբադասուած քառասուն մանուկներուն (գինուորներուն) տօնը եւ Յալէպի մէջ ԺԴ դարուն հիմնադրուած Սրբ. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը:



Եպիսկոպոսական Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցեց եւ իր հայրական պատգամը ժողովուրդին ուղղեց Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Սրբ. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ: Պատարագին ներկայ էին Ազգային Վարչութեան անդամներ՝ Մանուէլ Տէր Մանուէլեան, Գուրգէն Գալուստեան եւ հաւատացեալներու բազմութիւն:



Սրբազան հայրը «Յրաշափառ» շարականի երգեցողութեան ներքոյ, թափօրով մուտք գործեց եկեղեցի: Արքայական հօր առընթերականներն էին՝ Արժ. Տ. Նարեկ Ա. Զինյ. Չերեմեան եւ Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Չափանեան: Եկեղեցւոյ օրհնաբեր կամարներուն ներքեւ, Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպրաց դասը, ղեկավարութեամբ՝ դպրապետ քարշ. Գերոզ սրկ. Մսէրճեանի: Առաջնորդ Սրբազան Յայրը օրուան պատգամը ուղղեց ժողովուրդին: Ան փառք ու գոհութիւն յայտնեց Ամենակալին, որ առիթ ընծայեց միասնաբար յիշատակելու Մայր եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը եւ սրբոց քառասնից մանկանց բարեխօսութիւնը



հայցելու՝ ողջ աշխարհի, Յայաստանի, Արցախի, ծննդավայր Սուրիոյ եւ մանաւանդ սուրիահայութեան բարօրութեան համար:

Մեծ Պահեցողութեան հինգերորդ Կիրակիին, անիրաւ դատաւորին առակը պատմելով, սրբազան հայրը մատնանշեց Տիրոջ մեզի փոխանցած կարեւոր ճշմարտութիւնները: Զրիստոս մեզի կը պատուիրէ առանց վիատելու աղօթել, այս մէկը կը պահանջէ ներքին ուժ եւ կամք,



Շար. Էջ 9 >>

ԱԵԼԻ ԲԱՆ 600 ՀԱԶԱՐ ՏՈՒՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՅԱԼ ՀՕՍ-Ի ԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ ԿԱԼԱ 2023-ԻՆ՝ 550 ՀԻՐԵՐՈՎ

Կլենտէյլ, Բալիֆորնիա- ԱԵԼԻ քան 600 հազար տղար հանգանակուեցաւ Յայ Օգնութեան Միութեան (ՀՕՍ) Արեւմտեան ԱՄՆ-ի Կալա 2023-ին, որ տեղի ունեցաւ 12 Մարտին Տաղէան սրահին մէջ, ուր նշուեցաւ շրջանի հիմնադրութեան 40-ամեակը: Ներկայ էին՝ ՀՕՍ-ի Արցախի, Յայաստանի, Ջաւախքի, Լիբանանի եւ երկրաշարժէն աւերուած Սուրիոյ համահայկական աշխատանքներուն գորակցող 550 ներկաներ, ներառեալ ընտրուած քաղաքական ղեմքեր, գաղութի ղեկավարներ, ուղեկից եւ տեղական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ՀՕՍ-ի անդամներ եւ ծեռնտու նուիրատուներ:

Տարեկի Էքզիզանի եւ Վրոյր Թաղեմեանի հանդիսավարութեամբ յայտագիրը սկսաւ ԱՄՆ-ի, Յայաստանի եւ ՀՕՍ-ի քայլերգներով թնոր Ռաֆֆի Գերպապեանի կատարողութեամբ: ԱՄՆ-ի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Թորոմ Եպս. Տօնոյեան օրհնեց ՀՕՍ-ն ու ՀՕՍ-ի նուիրատուները ըսելով, «Անտուածային օրհնութիւնը անպակաս մնայ ՀՕՍ-ի ընդհանրական կեանքէն, Կեդրոնական Վարչութեան վրայէն, մեր շրջանի Շրջանային Վարչութեան վրայէն եւ բոլոր մասնաճիւղերու վրայէն, որովհետեւ ՀՕՍ-ը իր եզակի նկարագիրով եւ իր յատուկ առաքելութեամբ մեր ազգային, հայրենական կեանքին մէջ, ինչպէս նաեւ Յայաստանի, Արցախի, Ջաւախքի մէջ եւ



սփիւռս աշխարհի շատ յատուկ անմոցելի ծառայութիւն կը մատուցէ, որուն համար բոլորս կը խոնարհինք ՀՕՍ-ի ծառայութեան առջեւ»:

Ապա ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգեցին յիշատակը Յայաստանի պաշտպանութեան գոհուած հերոսներուն եւ Սուրիոյ երկրաշարժի զոհներուն:

Պատուոյ հիւրերու շարքին էին Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան (Արցախի Նախկին Առաջնորդ), Առաջնորդ Յիւսիսային Ամերիկայի եւ Բանատայի Արիւսապատիւ Տ. Միքայէլ Եպս. Մուրատեանի ներկայացուցիչ Տ. Ար-



մենակ վրդ. Պետրոսեան, ՀՕՍ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ դոկտ. Նայիրի Տէրտրեան եւ անդամներ Մարալ Մաթոսեան եւ Արիւսեան Մելքոնեան, Յայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տարոն Տէր Խաչատուրեան եւ անդամներ, Յայ Մշակութային Յիմնարկութեան Վարչութեան ներկայացուցիչ դոկտ. Միլի Յամբարեան, Ազգային Առաջնորդարանի Կեդրոնական Վարչութեան անդամ Ռոստոմ Այնթապեան եւ Ազգային Վարչութեան անդամ Ծովիկ Չէլթեան:

Ընտրուած քաղաքական ներկայացուցիչներու կարգին էին Բալիֆորնիոյ Նահանգային Ծերակոյտի անդամ Անթոնի Փորթոնթիսօ, Նահանգային Խորհրդարանի անդամ Լորա Ֆրիտմըն, Լոս Անճելըս Գաւառի Վերահիւսկիչ Զեթին Պարկըրի ներկայացուցիչ Աննա Մուրատեան, Արտաշէս Զասախեան Կլենտէյլ քաղաքի քաղաքապետը, Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Էլլէն Ասատրեան, Պըրպէնքի քաղաքապետական խորհուրդի անդամ Զիգէթ Մալինգ, ինչպէս նաեւ քննկրեսական Ատամ Շիֆի ներկայացուցիչ Մարի Յովակիմեան:

ՀՕՍ-ի Արեւմտեան Շրջանի Շրջանային Վարչութեան ատենապետուհի Վիքի Մարաշլեան արտասանեց վարչութեան խօսքը, ըսելով, «Չորս

Շար. Էջ 9 >>